ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՈՍԿԱՆՅԱՆ
ԵՊՀ, հայ բանասիրության ֆակուլտետի ասպիրանտ

ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՓԱԽՈՒՍՏԻ ԽՆԴՐԻՐԸ ԱՐԴԻ ՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ*[1]

Բանալի բառեր - *էքզիստենցիալիզմ, արդի հայ արձակ, օտարում, փախուստ, ինքնասպանություն, կերպարանափոխություն, ինքնօտարում, ժամանակի և տարածության այլընտրանքային ընկալում*

20-րդ դարավերջի և 21-րդ դարի գրականությունը, մասնավորապես՝ հայ արձակը, անհատի հոգում տեղի ունեցող խեղումների, հիասթափությունների, հեղաշրջումների վկայությունը եղավ: Անհատը, բախվելով իրեն շրջապատող աշխարհի կեղծիքին, անարդարություններին, սոցիալական և մարդկային անհավասարությանը, թևաթափվում է և շեքսպիրյան Համլետի պես մի լուծում տեսնում, այն է՝ փակվել մենաստանում, ինչպես վերջինս Օֆելյային է խորհուրդ տալիս: Սակայն մեր օրերի մենաստանն այլևս մարդու մեջ է, այն պատնեշը, որ կառուցել է նա ինքն իր, իր և մարդկանց միջև՝ օտարվելով նրանցից: Ահա ինչու է արդիական օտարման և փախուստի խնդրի քննությունը ժամանակակից հայ արձակն ուսումնասիրելիս:

Սույն հոդվածի շրջանակում օտարումը և փախուստը՝ իբրև էքզիստենցիալիստական փիլիսոփայության և գեղագիտության կենտրոնական հասկացություններ, քննվելու են մի քանի կողմերից: Ուսումնասիրության առարկան արդի հայ արձակն է, մասնավորապես՝ Լևոն Խեչոյանի, Գուրգեն Խանջյանի, Վահագն Գրիգորյանի, Ռաֆայել Նահապետյանի, Հրաչյա Սարիբեկյանի, Հովհաննես Թեքգյոզյանի, Արամ Պաչյանի գրականությունը: Թեև քննվող հասկացությունները բնորոշ են արդի արձակին ընդհանրապես, սակայն ընտրվել են հենց վերոհիշյալ հեղինակները, քանի որ նրանց երկերում առավել ցայտուն են դրսևորվում ստորև քննվող հատկանիշները: Նպատակն է ցույց տալ, որ փոխկապակցված այս երկու

* *Հոդվածն ընդունված է տպագրության 11.04.2020 թ.:*

հասկացությունների ներմուծումն ու կիրառումը արդի հայ արձակի և 20-րդ դարի տիրապետող ուղղության՝ էքզիստենցիալիզմի միջև արհեստականորեն կապ գտնելու միտում չունեն: Անհատի օտարումը և նրա գիտակցական, առավել հաճախ անգիտակցական փախուստն իրականությունից և սեփական ճակատագրից արտաքին աշխարհի գործոններով ու ներքին դրդապատճառներով են պայմանավորված:

Քաղաքական և սոցիալական հանգամանքների բերումով՝ անկախության շրջանի արձակի տիպական կերպարները *տարագիր անհատը և սոցիալապես անապահով մարդն* են դառնում: Երկու դեպքում էլ օտարման որոշակի աստիճանի հետ գործ ունենք: Հայտնվելով օտար, անծանոթ միջավայրում, ինչպես նաև ֆինանսական վիճակի անկայունության պատճառով կերպարները հասարակության կողմից օտարի պիտակ են ստանում: Ֆիզիկական այս պարտադրված օտարումը (հայրենիքից հեռու լինելը, ֆինանսապես ավելի բարձր մակարդակի վրա գտնվողներից հեռու մնալը և այլն) հոգեկան օտարման են հանգեցնում. անհատն իրեն ավելորդ է զգում, չհասկացված: Այսպես՝ Վ. Գրիգորյանի «Լավոնաս» պատմվածքի հերոսը օտարության մեջ ապրող և վերադառնալ չկարողացող գրողն է. «Ես օտար էի այդ կոկիկ քաղաքի փողոցներում՝ նրա քաղաքավարի անցորդների աչքերում, սրա-նրա տուն հրավիրելիս՝ գուցե թե հաճելի, բայց օտար զրուցակից էի, տեղացի գրողների հետ շփվելիս՝ բախտակից, բայց օտար բախտակից: Պատճառը միայն ազգությունս չէր, ոչ էլ լեզուն չիմանալս, այսինքն՝ միայն նրանց մեջ չէր, կամ՝ նախ և առաջ իմ մեջ, որ տեր չէի այս երկրի ու նրա մարդկանց սերերին ու տխրություններին»:[1] Ի դեպ, հատկանշական է օտարության մեջ հայտնված, հոգեկան սառնություն զգացող հերոսի վերադարձի անհնարինությունը: Խոսքը ոչ միայն ֆիզիկական վերադարձի մասին է, որին տարբեր բաներ են խոչընդոտում (զորօրինակ՝ բանակ զորակոչվելու վախը Վ. Գրիգորյանի «Ազատ հայը» վեպում), այլև հոգեկան վերադարձի: Իր գիտակից գրեթե ողջ կյանքն օտարության մեջ անցկացրած հերոսը՝ Ոստանը (Վ. Գրիգորյան, «Ոստանի վերջին ճամփորդությունը»), թեև մեկ երազանք ունի՝ ոտքով հասնել Հայաստան, այդպես էլ չի իրագործում իր ցանկությունը, թեև դրա համար բոլոր հնարավորություններն ուներ: Ուղիղ Հայաստան գալու փոխարեն քարտեզի վրա տա-

1 **Գրիգորյան Վ.,** Թռչունի հոգին (վիպակներ և պատմվածքներ), Եր., «Զանգակ-97», 2002թ., էջ 148:

որինակ զիգզագներ է գծում՝ ի վերջո մահկանացուն կնքելով Ռուսաստանի հեռավոր գյուղերից մեկում՝ օտար և անծանոթ մարդկանց շրջապատում: «... վերջին հաշվով, որտեղ ապրել ես, այնտեղ էլ պիտի թաղվես»[1],- ընդհանրացնում են վիպակի բախտակից հերոսները: Օտարության մեջ մեռնելը Ոստանի ենթագիտակցական ընտրությունն է: Ողջ կյանքում օտար լինելով՝ իր հետ անդրաշխարհ է տանում ինչ-որ մի տեղ՝ հայրենիքում, օտար չլինելու պատրանքը, որը գուցե անմիջապես ի չիք լիներ սահմանը հատելուց հետո: **Ինքնախաբեությունը** հերոսը գերադասում է օտար լինելու ծանրությունից ազատվելու հնարավորությանը: Ինքնախաբեությունը անընդունելի իրականությունից փախչելու և ծպտվելու, իրականությունը ուզածի պես խմբագրելու ու քեզ և ուրիշներին այդ նոր իրականությանը հավատացնելու միջոց է դառնում:

Սեփական կեցությունը, դեպքերի նմանատիպ զարգացումը չընդունող հերոսները իբրև այլընտրանք *պատրանքային իրականություն* են ստեղծում: Ընդ որում՝ իրականությունից նմանօրինակ փախուստը իրացվում է ինչպես գիտակցական մակարդակում, այնպես էլ ենթագիտակցական: Գ. Խանջյանի «Անմարդ լճափին գտած գրառումներ» պատմվածքի հերոսը իրեն, վարորդի վկայությամբ, մեքենայի տակ գցելու պատճառով հիշողությունը կորցրած մի քանդակագործ է, որ ոչինչ չի հիշում անցյալից՝ ո՛չ հարազատներին, ո՛չ մասնագիտությունը, որը թերևս ցավ է պատճառել հիմնականում պատանեկության երազանքներին հակասելով. գումար վաստակելու համար ստիպված տապանաքարեր ու շիրմաքարեր է տաշել: «Հոգեբույժներից մեկը կատակում էր. «Ինձ թվում է, թե Ձեր հիշողությունից ջնջվել է այն, ինչ կուզեիք, որ ջնջվեր»»:[2] Նույնը նկատում ենք նաև Լ. Խեչոյանի «Նարինջը» պատմվածքում: Այն Սպիտակի երկրաշարժի մի ողբալի դրվագ է ներկայացնում. տղան փլատակների տակ է մնացել, և նրա հայրն ու մեկ-երկու կարեկիցներ, փոխնեփոխ հանգստանալով, ոտքով, լինգով խփում, թփթփացնում էին սալերին՝ համոզելու համար տղային և, ինչո՞ւ ոչ, նաև իրենց, որ ողջ քաղաքն է օգնության հասել, մի քիչ էլ դիմանա[3]: Ինքնախաբեությունը ինքն իր և աշխարհի հետ հաշտ ապրելու մի ձև է, մեծահասակի խաղ, որ հեշտությամբ կարելի է շփոթել խենթության հետ: «Մեղե-

1 **Գրիգորյան Վ.,** Ոստանի վերջին ճամփորդությունը (վիպակ, վեպ), Եր., «Նաիրի», 2009 թ., էջ 35:

2 **Խանջյան Գ.,** Ստվերներ խամաճիկների փողոցում, Եր., «Նոր-Դար», 1998 թ. էջ 59:

3 Տե՛ս **Խեչոյան Լ.,** Փուշը, հա՛յր, փուշը, Եր., «Նահապետ», 2011 թ., էջ 79:

դի երևակայական ջութակի համար» (Ռ. Նահապետյան) պատմվածքի հերոս անտուն Ծերուկը, որ իր պահելաձևով, քաղաքավարի բառուբանով հակասում է շրջապատին, այդ օտարվածությունը հաղթահարելու, բարի մարդկանց բարեհաճությունը շահելու, ծխախոտ, խմիչք կամ խմելու հրավեր ստանալու համար ամեն անգամ նույն իրավիճակային խաղն է սկսում նրանց հետ՝ «Ձերդ մեծություն արքա»-ով դիմելով: Իր այս «խաղի» մեջ շաբաթ-կիրակիները չսիրող և ինքն իր հետ մենակ մնալուց վախեցող Տղամարդուն է ներքաշում. «Տիաճ ցուրտ էր, բայց փողոցով քայլող Ծերուկն ու Տղամարդը դա չէին զգում: Ծերուկը ձեռքերը այնպես էր պահել, ասես կիթառ էր բռնել և հարվածելով չեղած կիթառի, չեղած լարերին՝ երգում էր: Տղամարդը լուռ քայլում էր նրա կողքով: Հետո հանկարծ կանգնեց, հարմար կեցվածք ընդունեց ու ձեռքերն այնպես պահեց, ասես ինքն էլ ջութակ է բռնել: ... Աչքերը կիսախուփ, հոգում եղած ասելիքը Աստծուն ու աշխարհին մատուցելով՝ տղամարդը նվագում էր երևակայական ջութակի վրա»[1]:

Եթե վերոբերյալ օրինակներում ստեղծված պատրանքային իրականությունը լոկ հորինողին և նրա հետ սերտորեն առնչվող մարդկանց է վերաբերում ու փրկօղակ է ինչ-որ տեղ, ապա Լ. Խեչոյանի «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» վեպում այրված, կործանված Արշակավանը վերականգնելու խաբեությունը, թագավորի ուժի, անպարտելիության, ժողովրդի ամենակարողության պատրանք ստեղծելով, խորացնում է Արշակ արքայի օտարվածությունը, միայնությունը. օրական դրվող յուրաքանչյուր քար ու մուրճի հարվածի ձայն, որ պետք է մեծացնեին հավատը թագավորի անպարտելիության հանդեպ, ավելի պիտի մեկուսացնեին նրան բոլորից:

Այսպիսով՝ հասարակությունից օտարվելու առաջին աստիճանը հենց **իրականության խեղումը կամ փոփոխումն** է: Ընդ որում՝ ոչ միայն ցանկալի իրականության ստեղծումը, այլև մղձավանջներով լի ներկայի, որի միջոցով հերոսն աշխարհը հեռացնում է իրենից, ակամա արդարացնում փախուստը: Պատահական չէ, որ երկերում խախտվում են երազի, երևակայության և իրականության սահմանները, հեղինակը դիտավորյալ ընթերցողի հայեցողությանն է թողնում մեկին կամ մյուսին նախապատվություն տալը: «...իսկ չի՞ կարող պատահել, որ մենք հիմա ենք երազում՝ իմ կամ քո երազում կամ միանգամից երկուսիս, ո՞վ կհաստատի, որ մենք հիմա զար-

1 **Նահապետյան Ռ.,** Մեղեդի երևակայական ջութակի համար, Եր., «Ազգ», 1994 թ., էջ 99:

թուն ենք»[1],- ի պատասխան Վաղարշակի հարցադրմանը Վ. Գրիգորյանի «Թռչունի հոգին» վիպակի հերոս Վաղինակը Բորխեսին է մեջբերում. «Դու ոչ թե արթնացել ես, այլ նախորդ երազն ես տեսնում, այդ երազն իր հերթին է նախորդի մեջ ամփոփված, և այդպես շարունակ»[2]: Հալյուցինացիան, ինչպես նշում է Գ. Խանջյանի հերոս Գրոֆոն («Ենոքի աչքը»), դառնում է դուռ դեպի այլ չափումներ, դեպի ուրիշ մի աշխարհ՝ հարստացնելով հերոսների անգույն ներկան՝ իրականությունը. «Սարսափելի է, բայց գայթակղիչ, այնքան, որ կարող ես խելակորույս գնալ ու մնալ այնտեղ, ետդարձի ճամփան կորցրած»[3]:

Անկախության շրջանի արձակին բնորոշ են մղձավանջից քնած կամ արթմնի տառապող հերոսները, որ փրկվում են այդ տեսիլներից խմիչքի, թմրանյութի և շեղող, գիտակցությունը մթագնող այլ միջոցներով (տե՛ս Հովի. Թեքգյոզյանի «Փախչող քաղաքը» վիպակը, Լ. Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ» վեպը, Գ. Խանջյանի պատմվածքները, «Ստվերներ խամաճիկների փողոցում» վիպակը և այլն): Իրականությունը Վ. Գրիգորյանի «Թռչունի հոգին» վիպակի հերոսին՝ Վաղարշակին, խեղված է երևում. հարևանները թղթախաղ են խաղում, իսկ խաղաքարտերը թղթադրամներ են, սեկա են խաղում՝ սեղանով միջատներ են վազվզում, տանիքում մեկուսացած Վաղինակի կինն առնետի ատամներ ունի և այլն: Նա իր խմելը համեմատում է Վաղինակի գրելու հետ. «…ես էլ խմելով եմ ինձ խաբում, որովհետև երբ խմած չեմ, աշխարհը տեսնում եմ էնպես, ինչպես կա և, իմացած լինես, սև»[4]:

Օտարված անհատն այլևս չի գիտակցում իրեն իբրև հասարակության մաս և իբրև այդպիսին էլ չի ընկալվում վերջինիս կողմից: Նա ավելորդ է զգում իրեն թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես: Ներքին տվայտանքները «սխալ տեղում» լինելու եզրակացությանն են հանգեցնում: Այսպես՝ «…գուցե սա, պարզապես, իմ աշխարհը չէ, սխալմամբ եմ ընկել այստեղ…»[5] կամ «Սա քո կղզին չէ…»[6]: Օտարման մի շարք աստիճաններ կամ դրսևորումներ կարելի է առանձնացնել՝

1 **Գրիգորյան Վ.,** Թռչունի հոգին (վիպակներ և պատմվածքներ), Եր., «Զանգակ-97», 2002 թ., էջ 105:

2 **Նույն տեղում,** էջ 106:

3 **Խանջյան Գ.,** Ենոքի աչքը, Եր., «Անտարես», 2012 թ., էջ 161:

4 **Գրիգորյան Վ.,** Թռչունի հոգին (վիպակներ և պատմվածքներ), Եր., «Զանգակ-97», 2002 թ., էջ 84:

5 **Խանջյան Գ.,** Ենոքի աչքը, Եր., «Անտարես», 2012 թ., էջ 264:

6 **Պաչյան Ա.,** Ռոբինզոն և 13 պատմվածք, Եր., «Գրական էտալոն», 2011 թ., էջ 15:

անտարբերություն, ինքնօտարում, իրերի ինքնիշխանություն և անկախ գոյություն, ժամանակի և տարածության այլընտրանքային ընկալում, կերպարանափոխություն:

Օտարումն առաջին հերթին տարածվում է ժամանակին հարազատ թվացող մարդկանց, երևույթների վրա: **Անտարբերությամբ** համակված հերոսը նախ նրանց է հոգեպես վանում՝ հայտնվելով հոգեկան վակուումի մեջ: Լ. Խեչոյանի «Լրագրողը» պատմվածքի հերոսը սկսած գործը գլուխ բերելու և գիրքը՝ «զարմանալի աշխատանքը» ավարտելու համար ժամանակ և փող ունենալու նպատակով գրավ է դնում թե՛ իրենց, թե՛ սիրուհու բնակարանը: Բայց սոցիալական այս պայքարն ի վնաս հերոսի է ավարտվում. ամեն ինչ կորցնելով՝ զարմանալի է, հանդարտություն, հանգստություն է զգում միայն. «Անխափան հանդարտություն էր իջել, առավոտից իրիկուն խաղաղ մթնող օրվա մեջ էի»[1] (այս դիպաշարը նույնությամբ՝ առաջին դեպքով պատմվում է «Միերի դռան գիրքը» վեպում):

Անտարբերությունը զգացումների գերլարման, պրկման արդյունք է նաև. հերոսը հոգեկան ուժերի ներածին չափով կռվի մեջ է մտնում իրականության, իր էությանը հակասող երևույթների հետ և, ի վերջո, տեղի տալիս: Գ. Խանջյանի «Ստվերներ խամաճիկների փողոցում» վիպակի հերոսը՝ Կարոն, որդուն՝ Վրեժին, իրենից տարբեր է ուզում դարձնել, մեկը, ով իր շահերը կկարողանա պաշտպանել թշնամի իրականության մեջ: Դրա համար նախ պետք է գազանի պես հոշոտել կարողանա, մոռանա խղճի խայթ կոչվածի մասին: Ստիպում է որդուն քարկոծել նրա գտած, փաղաքշած շանը՝ ինքն օրինակ ծառայելով: Որդին ամեն կերպ դիմադրում է, փորձում օգնել անպաշտպան շնիկին, բայց անօգուտ. «Շան կաղկանձին ու Կարոյի չդադարող գոռոցին միախառնված ոռնում էր քամին: Վրեժն ավելի ամուր սեղմեց քարը, որն ասես հրում էր ձեռքը, գործողության մղում: Մի քանի անգամ հայացքը տարավ-բերեց արնաշաղախ, շարժումների ներդաշնակությունը կորցրած շան վրա, ապա հանկարծ ձգվեց, գազանային մի ճիչ արձակեց և ամբողջ թափով նետեց քարը: Հետո և՛ս մեկը, - էլի՛...»[2]: Սեփական համոզմունքներին դավաճանելուց հետո Վրեժն այլևս վարակված է անտարբերությամբ, որն առաջին հերթին պետք է ուղղվի ամենից հարազատ մարդու՝ հոր դեմ. վերադառնալիս Կարոն սայթաքում է, ընկնում ցեխի

1 **Խեչոյան Լ.,** Փուշը, հա՛յր, փուշը, եր., «Նահապետ», 2011 թ., էջ 34:

2 **Խանջյան Գ.,** Ստվերներ խամաճիկների փողոցում, եր., «Նոր-Դար», 1998թ. էջ 107:

մեջ, սակայն Վրեժը չի շրջվում, թեև ձայնից կռահել էր պատահածը: Հետաքրքրական է, որ արդի հայ արձակին բնորոշ են ծնողի, մասնավորապես՝ հոր բացակայությունը կամ բացակա ներկայությունը հերոսների կյանքում (տե՛ս Ա. Պաչյանի «Թափանցիկ շշեր», «Տորոնտո», «Տոնածառ» և այլ պատմվածներ, Գ. Խանջյանի «Ենոքի աչքը», «Լուր չկա» վեպերը և այլն). բարեկամաբար չտրամադրված աշխարհի և առանց ծնողի մեծացած հերոսների միջև պաշտպանիչ օղակ չկա, հետևաբար՝ կապն ավելի արագ է խզվում աշխարհի հետ, ավելի արագ են օտարանում: Նախկին ես-ը, ինչպես երևաց Կարոյի օրինակով, արդեն օտար է, չնայած երբեմն գլուխ է բարձրացնում ու ետ մղում նոր՝ չարացած ես-ին: Ինքնության ժխտումը հանգեցնում է **ինքնօտարման:** Ինքն իրեն կողքից նայելու, ինքն իրեն իբրև առանձին՝ սեփական կամքից անկախ միավոր դիտարկելու հնարքը շատ է կիրառվում արդի հայ արձակում, օրինակ՝ «Սունկ հավաքելու դանակով լայնացնում եմ կուրծքս սեղմող տարածությունը, սայրը խրում եմ դիմացինիս մեջ, ականջիս հասնում է ձայնը, որ գոռում եմ ճահճի վրա»[1] կամ «...լքված տանը նույնիսկ թվաց, թե այդ նա է փորսող տալիս, իսկ ես, համազգեստ հագած, հրամաններ եմ արձակում»[2]: Անհատը դադարում է իրեն առանձին միավոր դիտարկելուց, կորցնում է ես-ի սահմանները, համահարթեցվում անշունչ առարկաների հետ. «...կտրուկ ուժգնացող քամին փողոցի աղբի հետ քշում-տանում է շուրջս հավաքվածներին: Պատերի վրա տեսնում եմ քամուց քշվող երկարած ստվերները, իրենք արդեն չեն երևում: Թերևս իմ ստվերն էլ է նրանց ստվերների հետ, որովհետև որքան ջանում եմ հայտնաբերել ինքս ինձ՝ չեմ կարողանում»[3]:

Մարդուն շրջապատող առարկաներին վերագրվում են մարդկային հատկանիշներ, կերպարներն այն աստիճան են կորցնում իրենց ես-ի գիտակցումը, օտարվում իրենք իրենցից, որ առարկաներն են դիտարկվում իբրև դեպքերի կատարման շարժառիթներ: **Իրերի տիրապետության կամ ինքնիշխանության** այս մտայնությունն է ընկած Գ. Խանջյանի «Բեբի», Ռ. Նահապետյանի «Հեռախոսը» պատմվածքների հիմքում: Հովհ. Թեքգյոզյանի «Փախչող քաղաքը» վիպակում հերոսները իրենց փախուստը առարկաներին, մասնավորապես քաղաքին են վերագրում, մինչդեռ հենց նրանց յուրաքանչյուր օրը, գործողությունն է փախուստ:

1 **Խեչոյան Լ.,** Հունիսի հինգը կամ վեցը, Եր., «Արեգ», 2002 թ., էջ 9:

2 **Խանջյան Գ.,** Ստվերներ խամաճիկների փողոցում, Եր., «Նոր-Դար», 1998 թ. էջ 7:

3 **Նույն տեղում,** էջ 48:

Օրըստօրե զարգացող տեխնիկայի դարաշրջանում ապրող մարդը, անշուշտ, պետք է մտածի իրերի աշխարհում իր տեղի և դերի մասին: Անդրադառնալով այս հարցին՝ Մ. Հայդեգերը նշում է, որ ենթարկվելով իրերին՝ միևնույն ժամանակ պետք է դրանց ստրուկը չդառնալ: Պահանջում է որոշակի օտարվածություն իրերից[1]: Հռնդացող մեքենաներով, ինքնաթիռներով հագեցած քաղաքակիրթ աշխարհին Խանջյանը հակադրում է գյուղաքաղաքը կամ քաղաքի աղմուկից հեռու գտնվող արևային հովիտը, որտեղ, փախչելով ժամանակակից աշխարհից, կեղծիքից, միջանձնային բախումներից, կարող ես հոգեկան հանգիստ գտնել (տե՛ս Գ. Խանջյանի «Անվավոր թշնամիներ», «Արևային հովիտ» պատմվածքները): Ժամանակակից աշխարհի կամ տեխնիկական առաջընթացի ժխտումը իրերի տիրապետության, ինքնիշխանության հաղթահարման փորձ է:

Աշխարհից ու մարդկանցից հիասթափված, հոգեպես օտարված հերոսները մեկուսացնում են իրենց նաև ֆիզիկապես՝ **պայմանական տարածություն կամ ժամանակ ընտրելով՝** մարդկանցից լիարժեքորեն անջրպետվելու համար: Վ. Գրիգորյանի «Թռչունի հոգին» վիպակի հերոսը իբրև այդպիսի պայմանական տարածք տանիքն է ընտրում, Գ. Խանջյանի «Նամակ ընթացքից» պատմվածքում գնացքն է հանդես գալիս որպես հարակայուն հարաբերություններից, չփոփոխվող մարդկանցից փախչելու միջոց: Հր. Սարիբեկյանի «Գուշակություններ հայելիներով» վիպակում հերոսը մեկուսանում է աշխարհից իր իսկ տանը. դուռը կողպելով ներսից՝ մի պահ ապահովություն է զգում (դռան այս կողմում տունն է, մյուս կողմում՝ անծանոթ, թշնամի աշխարհը), բայց ակնթարթ անց տագնապում է. Թինան՝ հոր երիտասարդ կինը, բանալու կրկնօրինակն ունի: Այսպիսով՝ ֆիզիկապես շոշափելի տարածքի ընտրությունը հոգեկան օտարմամբ, ավելորդ զգալով է պայմանավորված, սակայն լիարժեք օտարում հնարավոր չէ. աշխարհը լի է մեկուսացողներին հենց իրենցից «փրկելու» պատրաստ մարդկանցով:

Հետաքրքրական է նաև **ժամանակի մեջ օտարումը**. իրենց թերի, լիովին չիրացված զգալով ներկայում՝ կերպարները մտովին հանգրվան են փնտրում անցյալում, ապագայում կամ ժամանակային որևէ չափման չենթարկվող տիրույթում: «Թռչունի հոգին» վիպակում գրելու կամ հարբելու միջոցով իրականությունը հաղթահարելով են միայն հերոսները համարձակվում խոսել ապագայի

1 Տե՛ս **Хайдеггер М.** Разговор на проселочной дороге. М., 1991, стр. 148-149:

մասին, թռչելու՝ երազելու հնարավորություն են ստանում[1]: Այլ՝ չբացահայտված ժամանակային տիրույթներում է Արշակ արքան: Ֆիզիկապես որդու հետ է, սակայն հոգեպես՝ մեկ այլ տեղ. «...տղան տեսավ, թե ինչպես նա հիմա էլ մոռացավ ներկան, քիչ շրջվեց թուխ մազերով, ալեխառն գլուխը հենեց ափին և անշարժ մնաց: Տղային թվում էր, թե նա, երկրի վրա թագավորություն անելով, ոչ թե ինչ-որ բան էր հաստատում, այլ ինչ-որ հաստատ բանից փախչում էր: Զգացվում էր, թե ինչպիսի ճիգերով նա նորից վերադառնում է ներկա, սակայն դարձյալ այդ նշանը, այդ անտեսանելին նրա հետ էր՝ դուրս չեկողը, չվերջացողը: ... Նա հասկացավ, որ թագավորը հեռու մի տեղ է, չի լսում»[2]:

Հոգեկան օտարման հաջորդ աստիճանը **կերպարանափոխությունն** է: Վ. Գրիգորյանի «Ես ձեր պահապան հրեշտակն եմ» վիպակում հերոսի կերպարանափոխությունը արթնացմամբ է սկսվում, ինչպես Կաֆկայի համանուն երկում: Մի տարբերություն կա սակայն. Գրեգոր Զամզան, ֆիզիկապես կերպարանափոխվելով և օտարվելով հարազատներից, հոգեպես մինչև վերջ նվիրված է մնում իր ընտանիքին: Քրոջ, ծնողների կամ աշխատակիցների հանդեպ ատելության բռնկումները որոպեական են, արագ տեղի են տալիս, մինչդեռ վերոհիշյալ երկում, ինչպես նաև Գ. Խանջյանի «Առնետը», «Արագիլը», «Ճարպոյի կերպարանափոխությունը» պատմվածքներում, Վ. Գրիգորյանի «Թռչունի հոգին» վիպակում կերպարանափոխությունը նախ հոգեկան մակարդակում է տեղի ունենում: Զամզայի կերպարանափոխությունը առավելապես արտաքին աշխարհից մեկուսանալու ցանկությամբ, իրականությունից դժգոհ լինելով է պայմանավորված: «Ես ձեր պահապան հրեշտակն եմ» և «Առնետը» երկերում կերպարները մարդկանց հանդեպ անսահման ատելություն են տածում: «Առնետը» մի հասարակություն է երազում, որտեղ չեն լինի ըմբոստներ և անդամալույծներ, մնացածները պարապ վայրկյան իսկ չեն ունենա: «Ազատ պետք է լինի միայն էլիտան, այսինքն՝ ես և ինձ նմանները, եթե այդպիսիք գտնվեն»[3]: Գրեգոր Զամզայի համար զազրելի ուտիճի վերածվելը բոլորովին էլ ուրախալի փաստ չէր. որքան էլ, քիչ-քիչ մարմինը ճանաչելով, սկսում է գնահատել կպչուն տոտիկների առավելությունը,

1 Տե՛ս **Գրիգորյան Վ.,** Թռչունի հոգին (վիպակներ և պատմվածքներ), Եր., «Զանգակ-97», 2002 թ., էջ 94-95:

2 **Խեչոյան Լ.,** Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, Եր., «Անտարես», 2013 թ., էջ 146:

3 **Խանջյան Գ.,** Շարժասանդուղք, Եր., «Նաիրի», 1994 թ., էջ 28:

ավելի շատ մտահոգվում է դանդաղ տեղաշարժվելու հանգամանքով և այդպես աշխատանքի ներկայանալու անհարմարությամբ: Ի հակադրություն Զամզայի՝ կոտոշավոր հրեշտակը հիացած է իր նոր արտաքինով, որն առավել ակնհայտ է դարձնում մարդկային մարմնի անկատարությունը. «Կարճ ասած, պոզերս կարծես թե ինչ-որ վերին նպատակ են մատնանշում, կճղակներս լի են նրան հասնելու վճռականությամբ, պոչս անսպառ երևակայության գրավական է, իսկ բաշս... ո՞ր մեղքիս համար հիմա էլ քաչալ վիզ ունենամ»[1]: Կերպարանափոխված հերոսները, իրենց շրջապատող մարդկանցից, անընդունելի իրականությունից օտարվելով և փախչելով, գոյության մի նոր կաղապար են ստեղծում: Ուշագրավ է, որ կերպարանափոխությունը Լ. Խեչոյանի գրականության մեջ իրացվում է իբրև մահվանից հետո գոյության շարունակելիության հնարավորություն (տե՛ս, օրինակ, «Արշակ արքա...»-ի Մառանին վերաբերող հատվածը, «Զանգը», «Դատախազի թաղումը», «Երկու կրակոց» և այլ պատմվածքներ): Քանի որ վերոգրյալը չի առնչվում փախուստի և օտարման խնդրին, կթողնենք լոկ իբրև դիտարկում:

Աշխարհի հանդեպ հարազատության զգացումը կորցնելով՝ անհատը հաճախ հանգում է ինքնասպանության մտքին: **Ինքնասպանությունը** իրականությունից փախուստի, սեփական էքզիստենցիայի հաղթահարման միջոց է դառնում: Ա. Կամյուն «Սիզիփոսի առասպելը» էսսեում, անդրադառնալով, ինչպես ինքն է բնութագրում, սրտի անմատչելի խորքերում հանճարեղ ստեղծագործության պես հասունացող ինքնասպանության գաղափարին, գրում է. «Վերջ տալ սեփական կյանքին նշանակում է ընդունել, որ ապրելն անտանելի է ու անիմաստ: ... Մենք կյանքի պարտադրած պայմաններին ենթարկվում ենք տարբեր պատճառներով, որոնցից առաջնայինը սովորությունն է: Կամավոր մահը թելադրվում է, թեկուզ բնազդաբար, այդ սովորության ծիծաղելիության, մեր առօրյա վազվզոցի անհեթեթության և տառապանքի ավելորդության գիտակցումից»[2]: Մուկուչը (Լ. Խեչոյան, «Խոզը»), Սերո հորեղբայրը (Լ. Խեչոյան, «Խնկի ծառեր»), Դանդ Արշոն (Գ.Խանջյան, «Լուր չկա») և այլք, չդիմանալով այլևս սեփական կեցության ծանրությանը, խղճահարություն առաջացնող մարմնի անկատարությանը, փախուստի վերոհիշյալ

1 **Գրիգորյան Վ.,** Թռչունի հոգին (վիպակներ և պատմվածքներ), Եր., «Զանգակ-97», 2002 թ., էջ 4:

2 **Կամյու Ա.,** Սիզիփոսի առասպելը (էսսե աբսուրդի մասին), Եր., «Ապոլոն», 1995 թ., էջ 12:

տարբերակն են ընտրում: Ընդ որում՝ մինչև այդ քայլին դիմելը օրեր առաջ իրենց ներսում էին այդ քայլն արդեն կատարել: Սակայն ազատագրո՞ւմ է արդյոք ինքնասպանությունը: Ինքնաոչնչացումից խուսափող մեր մարմինը այդ մտքից ետ է պահում հաճախ և, ինչպես նշում է Կամյուն վերոհիշյալ էսսեում, կյանքի իմաստը ժխտող փիլիսոփաներից ոչ ոք, չնչին բացառությամբ, սեփական ցանկությամբ կյանքից չի հրաժարվել, զորօրինակ՝ Շոպենհաուերը: Միգուցե ինքնասպանությունը ինչ-որ մի նոր՝ նույնքան անիմաստ բանի սկիզբ է, և կարիք չկա հանուն դրա ջանալու: «Ինքնասպանությունը համարում եմ փախուստ մի իրականությունից մյուսը, որտեղ գրեթե նույն իրականությունն է, ինչ այստեղ»[1],- ասում է Թեքգյոզյանի «Փախչող քաղաք»-ի հերոսներից մեկը՝ Գրիգը: Այսպիսով՝ **ինքնասպանությունը**, որ օտարված միայնակ հերոսի փախուստի ճիգ է, նրան թերևս ավելի է շաղկապում անելանելի իրականությանը:

Օտարված, ամեն րոպե փախուստի պատրաստ անհատը, այնուամենայնիվ, օտարման հաղթահարման ձև է գտնում՝ **ֆիզիկական մերձեցումը:** Խոսելով 50-ական թվականների ամերիկյան էքզիստենցիալիստական գրականության մասին՝ Ս. Ֆինկելստայնը նմանատիպ ընդհանրացման է հանգում. «Սիրո ֆիզիկական կողմերը այնպիսի վիրտուոզ մանրակրկիտությամբ են նկարագրվում, որ ակամա համոզվում ես Մարքսի դրույթի արդարացիության մեջ. «Երբ որ մարդկայինը կյանքում վեր է ածվում «կենդանականի», կամ երբ մարդկանց ապամարդկային հոգեբանական փոխհարաբերությունները ի չիք են լինում օտարման թշնամական միջամտությամբ, «կենդանականը» դառնում է մարդու ճակատագիրը, և հենց այդ կենդանական նախասկզբում է հուսահատված մարդը փնտրում իր մարդկային էությունը»»[2]: Կնոջ կամ նույն սեռի ցանկալի մարմինը (ինչպես Թեքգյոզյանի «Փախչող քաղաք»-ում է) կարծես ինքն իրեն վերագտնելու, խեղդող իրականության հետ հաշտվելու հնարավորություն է. «Ինչպիսի՜ ծուղակ է հնարել Տերը, - մտածեց Կարոն: - Տիեզերական խաբեություն: Եթե այս քաղցր կարկանդակը չգցեր մեզ՝ երևի չկատարեինք ծրագիրը, քանի որ այդ ծրագրից անտեղյակ ենք, չենք հասկանում»[3]:

Արդի հայ արձակի քննությունը ուշագրավ է ոչ միայն օտարման

1 **Թեքգյոզյան Հովհ.,** Փախչող քաղաքը, Եր., «Անտարես», 2012 թ., էջ 38:

2 **Финкелстайн С.** Экзистенциализм и проблема отчуждения в американской литературе. М., Прогресс, 1967, с. 231.

3 **Խանջյան Գ.,** Ստվերներ խամաճիկների փողոցում, Եր., «Նոր-Դար», 1998թ. էջ 113:

և փախուստի թեմաների արծարծմամբ, դրանց դրսևորումների ուսումնասիրմամբ, այլև **օտարման՝ լեզվական մակարդակում իրացմամբ**: Պատումը հաճախ առաջ է տարվում որևէ պատկերավորություն ից զուրկ լեզվով, երբ բառերին վերագրվում է լոկ առարկաները մատնանշելու գործառույթ: Սրա շնորհիվ տեքստը հարստանում է նկարագրություններով, որ վեր են հանում հենց դիտողի «...վախը, անտարբերությունը և միայնությունը, ներկայացնում են արտաքին աշխարհը՝ սառը, ոխերիմ, անթափանց»[1]: Օրինակ՝ «Ավտոբուսի վերջին կանգառում երկու պատանիներ՝ կարմիր գլխարկներով, դեմքները չձևավորված, միաժամանակ աղջիկ հիշեցնող»[2] (Լ. Խեչոյան, «Թթու խնձորներ») կամ «Պահասենյակ, բեռնակիրների սայլակներ, թերթի կրպակ, գարեջրի կրպակ, ծանր փայտյա նստարաններ, մեծ ու փարթամ արմավենիներ՝ հսկայական թաղարներում, սյուներ, կամարներ, պատի վրայի վիթխարի ժամացույց... Կառամատույց»[3] (Գ. Խանջյան, «Կառամատույց»): Օտարումն ինքնատիպ ոճավորում է դառնում, երբ հեղինակը իրականությունը ուղղակիորեն ներկայացնելու փոխարեն այն իբրև արտացոլանք է պատկերում, այս դեպքում՝ կենդանու աչքերի մեջ՝ «Մարդը կծկվում, տնքում էր ջորու սև աչքերի մեջ, արյունոտ քարերի մեջ»[4] (Լ» Խեչոյան, «Սպասում»): Տեքստը շարադրվում է, այսպես ասած, անդեմ երկխոսությունների միջոցով. երկխոսում են, բայց դժվար է ասել՝ որտեղ է մեկի խոսքը ավարտվում, մյուսինը՝ սկսվում (տե՛ս Արամ Պաչյանի «Ռոբինզոն», «Ջազ», «Տխուր նավակներ», «Գիշերը ստվերի մեջ» պատմվածքները): Այս ձևով կարծես շեշտվում է յուրաքանչյուրի անդեմությունը, գոյության անկարևորությունը, լղոզվածությունը. գոյությունը օտարվում է կեցությունից, կերպարները կան ու չկան. «Քնա՞ծ ես: Չէ, քեզ էի սպասում. երեկ հայրս էր եկել, ձմերո՞ւկ էր բերել. տեսա՞ր: Հա՛, տեսա: Ո՞նց, պատուհանի մոտ, մենակ ես էի կանգնած: Ես քո ետևում էի: Նա ծեծո՞ւմ է քեզ: Չէ՛, մորս: Ինչի՞ համար: Հայրս քո նման ցանցառ մազեր ունի: Իմ նմա՞ն: Հա՛. նրա մազերը չեն սանրվում»[5]:

Կերպարների օտարումը կամ համահարթեցումը կատարվում

1 **Финкелстайн С.** Экзистенциализм и проблема отчуждения в американской литературе. М., Прогресс, 1967, с. 182.

2 **Խեչոյան Լ.,** Փուշը, հա՛յր, փուշը, Եր., «Նաիապետ», 2011 թ., էջ 67:

3 **Խանջյան Գ.,** Ստվերներ խամաճիկների փողոցում, Եր., «Նոր-Դար», 1998 թ. էջ 38:

4 **Խեչոյան Լ.,** Փուշը, հա՛յր, փուշը, Եր., «Նաիապետ», 2011թ., էջ 46:

5 **Պաչյան Ա.,** Ռոբինզոն և 13 պատմվածք, Եր., Գրական էտալոն, 2011 թ., էջ 148:

է նաև անվան մակարդակում՝ անդեմացման միջոցով: Անանուն հերոսների և չհստակեցված տեղանունների հետ գործ ունենք, որ այս կամ այն հատկանիշի կրողն են միայն, այսպես՝ Ծերուկ, Աղջիկ, Տղամարդ, Կին, Ճարպո, Եվրոլանդ… Անունը ինքնաճանաչման, աշխարհի կողմից ճանաչելի լինելու, դիմացինի ուրիշությունը ի ցույց դնելու միջոց է, ու այդ անունն է, որ չի սիրում Գ. Խանջյանի «Լուր չկա» վեպի նկարիչ Սուրենը[1]: Անանունությունը անհատին անբռնելի, անորսալի է դարձնում, ավելի ազատ: Անանունությունը ենոքի ապակե աչքին է նման (Գ. Խանջյան, «Ենոքի աչքը»), որ թաքցնում է իսկական էությունը, առավելություն տալիս: Անվան մակարդակում կերպարի՝ մյուսներից տարբերվելը Գ. Խանջյանը ցույց է տալիս նաև «Ենոքի աչքը» վեպում: Նարե, Գոռ, Ենոք և հայ իրականությանը բնորոշ այլ անունների կողքին հեղինակը կերտում է իրենց ոչ միայն կենսակերպով, այլև անուններով հասարակությունից տարբերվող, օտար կերպարներ՝ Ունային և Գրոֆոյին:

Ընթերցողի՝ օտարման լիարժեք զգացողությանը հեղինակը նույնպես հասնում է բառային, պատկերային մակարդակում: Այսպես՝ դեպքերը ներկայացնելով *բազմաձայնության* սկզբունքով՝ նույն իրադարձությանը տարբեր տեսանկյուններից նայելու հնարավորություն է տալիս, բայց միևնույն ժամանակ ընթերցողին հեռացնում տեքստից և պատմող հերոսից: Մեկ այլ դեպքում, գրական տեքստը «ասում է», «ասում եմ» բառաձևերով հարստացնելով, անմիջական խոսքուզրույցի պատրանք ստեղծելով, հեռու է վանում ընթերցողին, քանի որ նա լոկ *կատարված* դեպքերի մասին է լսում, լսում է և ոչ թե ականատեսը լինում:

Օտարման իրացմանը նպաստում է նաև տեքստի կառուցվածքը, մասնավորապես՝ *ֆրագմենտալությունը*, որ բնորոշ է, օրինակ, Հովի. Թեքգյոզյանի «Փախչող քաղաքը» վիպակին: Պատումի և ապրումի մասնատվածությունը ինչպես հեղինակին է օտարում իր պատմածից, այնպես էլ՝ ընթերցողին: Այսպիսով՝ ընթերցողի պայմանական օտարումն իրականացվում է պատումի առանձնահատկության շնորհիվ: Այն ոչ թե հեղինակի նպատակն է, այլ նրա կիրառած գրական հնարքի արդյունքը:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ օտարված, փախուստի ցանկությամբ համակված հերոսները պատնեշ են կառուցում իրենց և մյուսների միջև՝ եթե ոչ ֆիզիկապես, ապա հոգեպես իրենց դատապարտելով մահվան: Քննելով փոխկապակցված «օտարում» և

1 Տե՛ս **Խանջյան Գ.,** Լուր չկա, Եր., «Անտարես», 2016 թ., էջ 133-134:

«փախուստ» հասկացությունները՝ եկանք այն եզրակացության, որ սրանք իրենց ուրույն դրսևորումն են գտնում արդի հայ արձակում և պայմանավորված են պատմական (Արցախյան շարժում, Սովետական Միության անկում, արտագաղթ, եվրոպական սովորույթների որդեգրում և այլն), հոգեբանական (թերարժեքության բարդույթ, միայնության զգացում, չհասկացվածություն և այլն) հանգամանքներով ու բոլորովին էլ էքզիստենցիալիստական ընկալումների արհեստական պատճենման արդյունք չեն, այլ օբյեկտիվ իրականության գեղարվեստական արձագանք:

РУЗАННА ВОСКАНЯН: - *ПРОБЛЕМА ОТЧУЖДЕНИЯ И ПОБЕГА В СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ПРОЗЕ* **-** В данной статье рассматриваются две концепции, которые занимают центральное место в философии экзистенциализма: отчуждение и побег. Предметом исследования является современная армянская проза, в частности литература Гургена Ханджяна, Левона Хечояна, Ваагна Григоряна, Рафаэля Нахапетяна, Грачья Сарибекяна, Оганеса Текгёзяна и Арама Пачяна. Цель статьи показать, что отражение проблемы побега и отчуждение в армянской литературе - это не прямое влияние философии бытия, а результат исторических и психологических обстоятельств.

Ключевые слова: экзистенциализм, современная армянская проза, отчуждение, побег, самоубийство, метаморфоза

RUZANNA VOSKANYAN: - *THE PROBLEM OF ALIENATION AND ESCAPE IN CONTEMPORARY ARMENIAN PROSE:* **-** In this article, two concepts are considered that occupy a central place in the philosophy of existentialism: alienation and escape. The subject of the study is modern Armenian prose, in particular the literature of Gurgen Khanjyan, Levon Khechoyan, Vahagn Grigoryan, Rafael Nahapetyan, Hrachya Saribekyan, Hovhannes Tekgyozyan and Aram Pachyan. The purpose of the article is to show that the reflection of the problem of escape and alienation in Armenian literature is not a direct influence of the philosophy of being, but the result of historical and psychological circumstances.

Key words: existentialism, contemporary Armenian prose, alienation, escape, suicide, metamorphosis